

ՋՐՈՒՈՐՏԸ

Ջուրը մեր մոլորակի արյունն է: Ինչպես արյունն անոթներում շարժվելով սնունդ է հասցնում մարմնի բոլոր անդամներին ու բջիջներին, այնպես էլ ջուրը Երկիր մոլորակի վրա թափանցում է ամենուր, սնունդ հասցնում մարդկանց, կենդանիներին, բույսերին, ողջ օրգանական աշխարհին: Հույն անտիկ փիլիսոփաները ջուրը համարում էին բոլոր սկիզբների սկիզբը: Հույն փիլիսոփա Թալեսը մ.թ.-ից 600 տարի առաջ, տալով բնության երևույթների բացատրությունը, գտնում էր, որ ջուրն է ամեն ինչի սկիզբն ու վերջը, որ ջուրը կերպարանափոխվելով դառնում է հող կամ օդ: Այլ անտիկ փիլիսոփաներ ևս ջուրը դիտում էին որպես կյանքի աղբյուր: Եվ իսկապես, կյանքը Երկրի վրա ծնվել է ջրային միջավայրում:

Կենդանի նյութի էվոլյուցիայի ընթացքում կենդանական աշխարհի տարբեր ներկայացուցիչներ բազմիցս ջրից ցամաք են անցել, բայց կենդանիների միայն որոշ խմբեր են կարողացել հարմարվել ու զարգանալ ոչ ջրային միջավայրում: Բոլոր կենդանիներից միայն միջատներն են կապերը առավելապես խզել ջրային միջավայրի հետ: Նրանցից քչերն են իրենց կենսական ցիկլի որոշ փուլերում վերադառնում ջրային միջավայր: Մնացած կենդանիները, այդ թվում նաև թռչուններն ու կաթնասունները, սաղմնային զարգացման փուլում դեռևս պահպանել են իրենց կապը ջրային միջավայրի հետ:


Ջուրը կազմում է մարդու մարմնի մոտ 70%-ը: Նոր ձևավորված սաղմը, ինչպես և նորածնի մարմինը, 90% ջուր է պարունակում: Սահանալիս օրգանիզմի 50%-ն է ջուր: Այլ կերպ ասած՝ մեր ամբողջ կյանքի ընթացքում մենք հիմնականում զոյություն ունենք ջրի տեսքով: Երբ մարդը կորցնում է իր մարմնի ջրի 50%-ը, ապա նրա կյանքը վտանգված է:

Ջուրը Երկրի ամենատարածված նյութն է, որը ծածկում է Երկրագնդի մոտավորապես 70%-ը: Երկրի վրա մշտապես տեղի է ունենում ջրի շրջապտույտ օվկիանոսի և ցամաքի միջև: Ջուրը և նրա մեջ լուծված նյութերը գոլորշիանում և օդային հոսանքներով տեղափոխվում են տասնյակ, հարյուրավոր և հազարավոր կիլոմետրեր հեռու: Հաշվարկված է, որ Երկրի մակերեսից 1 րոպեի ընթացքում գոլորշիանում է 1 մլրդ տոննա ջուր և այդքան էլ թափվում է տեղումների ժամանակ: Տեղումների ձևով թափվելով՝ այն նպաստում է լեռնային ապարների քայքայմանը՝ նրանց մատչելի դարձնելով բույսերի և մանրէների համար, լվանում է հողի վերին շերտը և լուծված օրգանական ու անօրգանական միացությունների հետ հոսում է դեպի ծովերն ու օվկիանոսները:

Համաշխարհային օվկիանոսի և ցամաքի միջև ջրի շրջանառությունը Երկրի վրա կյանքի պահպանման կարևորագույն օղակն է և անկենդան բնության հետ բույսերի ու կենդանիների փոխազդեցության հիմնական պայմանը:

Ջրի հետ նյութերի այս շրջապտույտը համեմատելի է մարդու արյան մեծ շրջանառության հետ, որի շնորհիվ օրգանիզմի հյուսվածքները ստանում են սննդարար նյութեր և թթվածին:

Ջրի ֆիզիկական, քիմիական հատկությունների, նրա կենսաբանական դերի մասին կարելի է կարդալ համապատասխան դասագրքերում: Սակայն 1933 թվին հայտնի ֆիզիկոսներ Ջ. Բերնալը և Ռ. Ֆաուլերը ապացուցեցին, որ ջուրը բոլորովին էլ H_2O չէ: Այո, ցանկացած ջուր ունի այդպիսի զոյացություններ՝ մոնոմոլեկուլներ, բայց ավելի շատ են նրանց առաջացրած կոմպլեքսները $(H_2O)_n$ բանաձևով (Նկ. 3): Ջրի միևնույն զանգվածում առանձին H_2O -ի և նրա կոմպլեքսների հարաբերությունը խիստ անկայուն է:



Նկ. 3. Ջրի կառուցվածքը

Ա - ջրի մոնոմոլեկուլը, Բ, Գ - ջրի մոլեկուլների բարդ կոմպլեքսները:

Բազմաթիվ լաբորատորիաներում արձանագրվել են ջրի ֆիզիկաքիմիական և կենսաբանական հատկությունների փոփոխություններ մագնիսական դաշտի, ուլտրաձայնի, էլեկտրական հոսանքի, սառեցման, կենսադաշտի և այլ գործոնների ազդեցությամբ: Այդ փոփոխությունները հանգեցնում են ջրի ակտիվացմանը և կենսաբանական թաղանթներով նրա թափանցելիության մեծացմանը: Ռուս գիտնական Է. Ի. Կրեչը այդ երևույթը բացատրում է հետևյալ կերպ. «Ջրի վրա այս բոլոր ազդեցությունները, առանց բացառության, նպաստում են խոշոր կոմպլեքսների մասնատմանը ավելի մանրերի և մոնոմոլեկուլների: Այդ ազդեցությունների ընդհատումից հետո տեղի է ունենում հետադարձ պրոցեսը»: Ո՞րն է մոնոմոլեկուլների և փոքր կոմպլեքսների կենսաբանական բարձր ակտիվության պատճառը: Մոնոմոլեկուլները բևեռացված են, հետևաբար լուծում են ավելի շատ կենսաբանական ակտիվ նյութեր ադզեզիայի շնորհիվ: Բացի դրանից, նրանք կոմպլեքսների համեմատությամբ փոքր չափեր ունեն և հեշտությամբ են անցնում բջջաթաղանթի միջով՝ տեղափոխելով սննդարար նյութեր դեպի բջիջը և այնտեղից դուրս բերելով նյութափոխանակության արգասիքները: Այդ ազդեցությունների հետևանքով ջրում արագանում են ֆիզիկաքիմիական գործընթացները, քանի որ մոնոմոլեկուլները իրենց բևեռացման շնորհիվ առաջացնում են նյութերի էլեկտրոլիզային դիսոցիացիա, բարձրացնում են իոնների խտությունը և, հետևաբար, ռեակցիաների արագությունը¹:

Պարզվել է, որ սառցահալոցքից առաջացած ջուրը հիմնականում կազմված է եռիդրոլից (երեք մոնոմոլեկուլներից կազմված կոմպլեքս) և օժտված է ֆիզիոլոգիական մեծ ակտիվությամբ, արագացնում է բույսերի աճը, ազդում է տարբեր օրգանիզմների կենսական պրոցեսների վրա: Հալոցքի ջուրը, ինչպես նաև սառույցն ու կենդանի օրգանիզմների ջուրը, ունեն կանոնավոր կառուցվածք, որով էլ պայմանավորված է հալոցքի ջրի բուժիչ ազդեցությունը: Պարզվել է, որ կենսաբանական մոլեկուլների հետ անմիջական հպման մեջ գտնվող ջրի մի մասը, նույնիսկ օրգանիզմի ջերմաստիճանի պայմաններում, ունի սառույցի կառուցվածք: Ջրի այդ «սառցային» կառույցները, ըստ Սենտ-Դյերդի, հանդիսանում են «կյանքի մատրիցա»-ն, առանց որի կյանքն անհնարին է: Միայն նրանց առկայությամբ է պայմանավորված կյանքի համար կարևորագույն կենսաքիմիական և կենսաֆիզիկական ռեակցիաների ընթացքը, մասնավորապես, կենդանի օրգանիզմում էներգիայի փոխադրումը դեպի նրա օգտագործման վայրը: Ջրի «սառեցման» համար անհրաժեշտ է նրանում ստեղծել բյուրեղացման կենտրոններ: Դրանից հետո ջուրն սկսում է վերածվել

¹ Татарский Ф. Борьба за «странную воду». // Химия и жизнь. № 12, 1989, стр. 57-59.

«սառույցի»՝ շղթայական ռեակցիայով: Իսկ ձյան հալոցքի ջուրը պարունակում է գազի մանրագույն բշտիկներ, որոնք մեծացնում են բյուրեղացման կենտրոնների քանակը²:

Ինչպես արդեն նշվեց, տարբեր ազդեցություններից ջրի մոլեկուլների բարդ կոմպլեքսները տրոհվում են մոնոմոլեկուլների, որոնք նորից կարող են առաջացնել տարբեր ձևերի ու կառուցվածքի, պարզ կամ բարդ կոմպլեքսներ: Դրանք օժտված են որոշակի առանձնահատկություններով, որոնցից թերևս ամենաուշագրավը ջրի ինֆորմացիա պահելու ունակությունն է:

Ս. Վ. Ջենինի հետազոտությունները ցույց տվեցին, որ ջուրն իրենից ներկայացնում է ծավալային կանոնավոր կառուցվածքների հիերարխիա, որի հիմքը կազմում է ջրի 57 մոլեկուլներից կազմված բյուրեղանման «ջրի քվանտը»: «Ջրի քվանտները կարող են փոխազդել միմյանց հետ ազատ ջրածնային կապերի հաշվին, որի հետևանքով առաջանում են երկրորդ կարգի վեցանիստ կառուցվածքներ: Դրանք կազմված են ջրի 912 մոլեկուլներից, որոնք ջրածնային կապերով այլևս միմյանց հետ փոխազդելու ընդունակ չեն»: Պարզվում է, որ ջրի կառուցվածքային այդպիսի վիճակը չափազանց զգայուն է տարբեր բնույթի դաշտերի նկատմամբ³:

Աշխարհի տարբեր երկրների գիտնականները համարյա միաժամանակ պարզել են, որ ջուրը կենդանի նյութ է: Այն կարող է ընդունել, պատճենել, պահպանել և փոխանցել նույնիսկ այնպիսի նուրբ ինֆորմացիա, ինչպիսին մարդկային միտքն է, բառը և հույզը: Այդ ուղղությամբ մանրակրկիտ հետազոտություններ է կատարել ճապոնացի գիտնական Մասարու Էմոտոն: Նա գրում է. «Ջրի հիշողության հետազոտության համար պատճառ հանդիսացավ 1956 թ. Հարավարևմտյան Ասիայի փակ լաբորատորիաներից մեկում զանգվածային ոչնչացման զենքի ստեղծման ուղղությամբ կատարվող աշխատանքների ժամանակ տեղի ունեցած միջադեպը: Այդ զենքի մասին ընթացող գաղտնի խորհրդակցությունը մի քանի ժամ հետո ընդհատվեց ներկաների հանկարծակի հիվանդության պատճառով: Հիվանդանոցում պարզվեց, որ դա սուր սննդային թունավորում է: Բայց զննումները անմիջապես ստան փակուղի, որովհետև այդ ժողովի ներկաները սեղաններին դրված ջրից բացի ոչինչ չէին օգտագործել: Այդ ջրի մեջ նույնպես վնասակար նյութեր չհայտնաբերվեցին: Սակայն հաշվետվության մեջ գրանցվեց, որ թունավորման պատճառը ջուրն է եղել: Ես չեմ կասկածում, որ այդպես էլ եղել է, բայց մի վերապահումով, որ ջուրը ինչ-որ ձևով ընկալել է մարդկանց կողմից հնչեցրած «թունավոր» ինֆորմացիան: Ջրի մոլեկուլները այնպես էին դասավորվել, որ կառուցվածքով թույն էին դարձել: Կարծես, ջուրն ըմբոստացել էր հրեշավոր փորձերի դեմ»⁴:

Ջուրը համակարգիչ է: «Ինֆորմացիա ընկալելով՝ ջուրը ձեռք է բերում նոր հատկություններ, - ասում է Էմոտոն, - սակայն նրա քիմիական կազմությունը մնում է նույնը: Ջրի կառուցվածքը պայմանավորված է իր մոլեկուլների կազմավորմամբ: Մանրադիտակով կարելի է տեսնել, թե ինչպես են դրանք միավորվում առանձին խմբերում և դառնում հիշողության ինքնատիպ բներ, որտեղ ջուրը, ինչպես մագնիտոֆոնային ժապավենի վրա, գրում է իր ինֆորմացիան»: Մ. Էմոտոն պարզել է, որ ջուրը որոշակի ազդեցություն է կրում մարդկային մտքերից: Իր փորձերից մեկում նա բրնձով լցված երեք փորձանոթներում ջուր է ավելացնում, և երեք անսվա ընթացքում ամեն օր աշխատակիցը առաջին փորձանոթին «շնորհակալություն» է հայտնում, մյուսին ասում է՝ «դու հիմար ես», իսկ երրորդին ուշադրություն չի դարձնում: Մեկ ամիս հետո «շնորհակալության» արժանացած փորձանոթում բրինձը սկսում է խմորվել և ուժեղ հաճելի հոտ արձակել, երկրորդ փորձանոթի բրինձը սևանում է, իսկ ուշադրության չարժանացածը սկսում է նեխել: Դոկտոր Մ. Էմոտոն գտնում է,

² Аракелян Г. С., Алавердян А. А. *Интегративная медицина*, т. 1, Ереван, Тигран Мец, 2006, № 220.

³ Бутакова О. А. *Возвращение утраченных свойств*. Нижний Новгород, 2008, стр. 37.


⁴ Эмото Масару. *Послание воды: Тайные коды кристаллов льда*. Перев. с англ. М.: ООО Изд-ский дом «София», 2005.

որ այս գիտափորձը կարևոր դաս է այն մասին, թե որքան կարևոր են հոգատարությունն ու ուշադրությունը շրջապատի մարդկանց նկատմամբ: Չէ՞ որ մարդկային օրգանիզմը մեծ մասամբ կազմված է ջրից, որը զգայուն է միջավայրի հուզական դրսևորումների նկատմամբ: Անտարբերությունը, ատելությունը, զայրույթը և նույնիսկ գրգռվածությունը վնասակար ազդեցություն են ունենում ոչ միայն դիմացինի վրա, այլև ունենում են հետադարձ ազդեցություն հակադարձ կապի սկզբունքով. «Նա, ով բարկանում ու անիծում է, առաջին հերթին կեղտոտում է իր սեփական օրգանիզմը, որը 70%-ով բաղկացած է ջրից և իր համար «ծրագրավորում է» հիվանդություն», - գտնում է ավստրիացի հետազոտող Ալոիս Գրուբբերը:

Մ. Էմոտոն հետազոտել է, թե ջուրը ինչպես է փոխվում տարբեր ազդեցություններից՝ սկսած բջջային հեռախոսներից ու հեռուստացույցից մինչև սիրո խոսքեր և երաժշտություն: Նա այդ ազդեցություններից հետո ջրի կաթիլը հատուկ փորձանոթներում տեղադրում է սառնարանի մեջ և մանրադիտակով ուսումնասիրում առաջացած բյուրեղները:

Դասական ցանկացած երաժշտություն «լսած» ջուրը առաջացնում է հստակ արտահայտված կանոնավոր եզրերով, ձյան փաթիլներ հիշեցնող բյուրեղներ: Հակառակ դրան, ծանր ռոք երաժշտության ազդեցությամբ ջուրն առաջացնում է կոտրտված, անկանոն ձևավորված բյուրեղներ:

Ջուրը նման վերաբերմունք է ցուցաբերում նաև բառերի և խոսքի ինտոնացիայի նկատմամբ: «Սեր», «շնորհակալություն», «երախտագիտություն» և այլ նման բառերից ջուրն առաջացնում է «հրաշք» բյուրեղներ: Իսկ բացասական իմաստ պարունակող (ատելություն, սպանել և այլն) և արհամարհական ու հրամայական տոնով արտասանված բառերը առաջացնում են ջրի տզեղ ու անկանոն բյուրեղներ (Նկ. 4): Անկասկած, նման նուրբ զգացողությամբ կարող է օժտված լինել միայն կենդանի գոյությունը:



Նկ. 4. Տարբեր բառեր «լսած» ջրի բյուրեղներ (ըստ Մ. Էմոտոյի)
 ա - ես քեզ սիրում եմ, բ - երախտագետ եմ, գ - շնորհակալ եմ, դ - ես քեզ ատում եմ, ե - ես քեզ կսպանեմ, զ - ես քեզանից զզվում եմ:

Կատարված փորձերից հետևում է, որ որոշակի ուժով են օժտված նաև բառերը, որ դրական բառերի տատանումները (վիբրացիաները) դրական ազդեցություն են թողնում շրջապատի վրա, իսկ կոշտ ու բացասական բառերն ընդունակ են ավերելու այն:

19-րդ դարի առաջին կեսին Գերմանիայում Սամուել Յանենանի (1791-1843) աշխատանքների շնորհիվ բժշկության մեջ ներդրվեց նոր մոտեցում՝ հոմեոպատիա, որում խիստ ընդգծված է ջրի կարևորությունը: Այս մոտեցման հիմքում ընկած էր «նմանը նմանով բուժելու» սկզբունքը: Օրինակ, մալարիայով հիվանդին բուժում են խիմիկ կոչվող դեղամիջոցով: Խիմիկն առողջ մարդու մոտ առաջացնում է մալարիայի տենդին նմանվող ախտանիշներ: Բուժման այս մեթոդն ունի մի շատ կարևոր առանձնահատկություն: Եթե հոմեոպատիկ դեղը նոսրացվի միլիոնավոր անգամներ, ապա նրա բուժիչ հատկությունը չի նվազի, չնայած այդ լուծույթում դեղի մոլեկուլներ համարյա չեն մնում: Բանն այն է, որ լուծիչ հանդիսացող ջուրը կարողանում է պատճենահանել ու պահպանել դեղի մոլեկուլներից ստացած ինֆորմացիան՝ ձեռք բերելով տվյալ դեղամիջոցի բուժիչ հատկությունները:

Եթե, ինչպես պնդում են գիտնականները, ջուրը մտածող, զգացող, հիշողությամբ օժտված նյութ է, այսինքն՝ կենդանի նյութ է, ուրեմն ջրային համակարգերը, որպես այդ նյութի հսկայական զանգվածներ, ևս կենդանի համակարգեր են:

Բայկալ լճի մասին տեղեկությունները, որոնք հրապարակել է Բայկալի գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող Վ. Ն. Խրոմովան, դրա լավագույն ապացույցն են: «Մեր ինստիտուտը մշտապես հետևում է լճին: ...Բայկալի ֆիզիկական յուրօրինակ է, նա չունի իր նմանը մեր մոլորակի այլ վայրերում», - գրում է նա: Այդ տեղեկություններից պարզվել է, որ Բայկալն արագ ինքնամաքրվում է: Լճի մակերևույթի յուղային բծերն անհետ ներծծվում են մի քանի ժամվա ընթացքում: Այն, որ նրա ջուրը չի կեղտոտվում, բացատրվում է ոչ թե հատուկ ձեռնարկված միջոցառումներով, այլ լճի յուրահատկություններով: Բայկալը շնչում է: Առաջ ընդունված էր այդ բառը վերցնել չակերտների մեջ: Բայց պարզվում է, որ իսկապես լիճը շնչում է: Բայկալի շնչառությունը նկատելի է հատկապես ձմռանը: Լճի սառույցի մակերևույթին անսպասելիորեն ճաք է առաջանում, նրա եզրերը հեռանում են, և բացվածքի վրա բարձրանում է խիտ մառախուղ: Մի քանի ժամ անց սառույցի եզրերը նորից մոտենում են, և երկու-երեք օր հետո սառույցի մակերեսին ոչ մի հետք չի մնում: Բայկալը նաև սնվում է: Լճում մահացած բույսերի և կենդանիների մնացորդները անհետանում են: Ժամանակ առ ժամանակ լճի ափին զգացվում է «որովայնային» գազերի յուրահատուկ հոտ: Ի դեպ, հարկ է նշել, որ Բայկալը շնչում է իր հարավային մասով, իսկ գազերը բաց է թողնում հյուսիսարևմտյան ափում՝ Բայկալի լեռնաշղթայի մոտ: Ստացված բոլոր տվյալները վերլուծելով, ինստիտուտի աշխատակիցները եկել են այն եզրակացության, որ Բայկալը կենդանի օրգանիզմ է իր ֆիզիոլոգիական դրսևորումներով⁵:

Նույնը կարելի է պնդել նաև Սևանա լճի վերաբերյալ: Այսպես, լեռներից եկող մեծ ու փոքր առուները Սևանի մեջ են լցնում բնակավայրերից «հավաքած» կենցաղային աղբի հսկայական քանակություն: Այդ անընդհատ, շարունակական պրոցեսը կարճ ժամանակում Սևանը կարող էր վերածել մի մեծ աղբանոցի: Լճի մեջ թափվող անսահման քանակությամբ պոլիէթիլեն

⁵ Рохн А. Славное море - Священный Байкал. // Тайны XX века. № 6, 1999, стр. 8.

տոպրակներն ու շշերը չէին կարող աննկատ մնալ ջրի վրա: Սակայն իր համար օտարածին այդ տարրերի նկատմամբ լիճը չի կարող անտարբեր մնալ և որպես կենդանի էակ այդ կեղտոտ «սնունդից» «սրտխառնոց է զգում» և, ժամանակ առ ժամանակ ալեկոծվելով, ափ է «փսխում» այդ աղբը: Ալեկոծության ժամանակ ափ են շարտվում նաև մեծ քանակությամբ խեցգետիններ, որոնք, ըստ մասնագետների, բնորոշ չեն Սևանի ֆաունային: Դրանք դուրս նետելով՝ լիճը ինքնամաքվում է՝ վերականգնելով իր բնականոն վիճակը, իր էկոհամակարգի հոմեոստազը: Այդպիսի վարքագիծ կարող են դրսևորել միայն կենդանի օրգանիզմները:

Գաղտնիք չէ, որ վերջին ժամանակներս հաճախացել են ջրային տարերքները՝ ջրհեղեղները, փոթորիկները, ցունամիները և այլն: Դրանք կարելի է բացատրել Երկրագնդի կլիմայի գլոբալ տաքացումով, մագնիսական դաշտի փոփոխություններով և այլ երկրաֆիզիկական և օթերևութաբանական շեղումներով: Սակայն բացառված չէ, որ այդ տարերքները Երկիր կոչվող կենդանի օրգանիզմի և նրա մաս կազմող Զամաշխարհային օվկիանոսի պատասխան ռեակցիան է մարդկային հասարակության կողմից «արտադրված» բացասական հույզերի՝ ատելության, բռնությունների, ուրիշներին կեղեքելու, ստի, թշամանքի, նախանձի, չարության, անբարոյակա- նության նկատմամբ: Այդ օրեցօր հզորացող բացասական էներգիան չի անհետանում, այլ կենտրոնանում է նոոսֆերայում, որը մարդկային բանականության ոլորտն է, և հակադարձ կապի սկզբունքով վերադառնում է Երկիր՝ ալեկոծելով ջրային հսկայական համակարգերը՝ ծովերն ու օվկիանոսները: Դա Տիեզերք կոչվող կենդանի համակարգի պատասխանն է մարդկության կողմից հրահրվող սթրեսային իրավիճակներին:

Չմոռանանք նաև, որ Զամաշխարհային ջրհեղեղը, ըստ Աստվածաշնչի, տեղի ունեցավ, «*Երբ Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են Երկրի վրա և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում...*» (Ծննդոց 6:5):



Բովանդակություն